



## ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ ԵԿԵՂԵՑԻ Հովիւ՝ Վեր. Տիգրան Թանդեան

Տարի 10, Թի 109

Հոկտեմբեր

2002

### Ո՞ՒՐ ԵՒ Ի՞ՆՉ ԿԸ ՇԻՆԵՍ

«Ով Գէեզի, ուրկէ՞ կու գաս. եւ անհկա ըսաւ, Ծառադ տե՛ղ մը չզնաց»:  
4 Թագ. 5:25

Ատուածահաճոյն Ակարագիր կերտելու ամէն փորձ որ շինուած է անձնական շահերու վրայ, միայն օդին մէջ դղեակ շինելու նման է:

Անմիտ շինողներու աչքին, այս դղեակները հիմնական կ'երեւին. սակայն Աստուծոյ համար անոնք գոյութիւն չունին:

Ուշադիր, ո՞ր կը շինես, ինչպէս նաեւ ի՞նչ կը շինես:

Գէեզի փորձեց այսպիսի դղեակ մը շինել, սակայն դատապարտուած էր արարաւիտի յուսահատութեան:

#### 1. Յատուկ առանձնաշնորհ –

Ան «Աստուծոյ մարդուն, Եղիսէի ծառան էր»: «Գէեզի» անունը կը նշանակէ «տեսիլքի ձոր», եւ յարմարագոյն ձեռով կը ներկայացնէ իր պատուար դիրքը:

Անհկա, շնորհիւ Իր տիրոջ՝ Եղիսէի գործերուն ու խօսքերուն, աստուածային զօրութեան եւ բարութեան տեսիլքներ ունեցաւ:

Թէ՛ւս ապրեցաւ ու շարժեցաւ հոգեւոր մթնոլորտի մէջ, սակայն իր հպարտութեամբ ու նիւթապաշտութեամբ, կ'ապացուցէ իր անդարձ լուսարարի վիճակը: Հոգեւոր ազդեցութիւններ եւ առիթներ շատ քիչ օգտակարութիւն կ'ունենան հոգիներու վրայ: Տարիներով կը նստին Աւետարանի ծառայութեան տակ, բայց ոչ մէջ նպաստ իրենց հոգիներուն, կեանքերուն:

#### 2. Անձնաւոր նպատակ –

«Տէրը կենդանի է որ եւ անոր ետեւէն կը վագեմ, եւ անկէ բան մը կ'ստնես» 20րդ համար: Կասկած չկայ որ փորձութիւնը շատ մեծ էր այս կծծի, անկազ մարդուն համար: Ահա առիթ մը հարստանալու, ոչ թէ կողոպտելով իր տէրը այլ պարզ, շիտակ կարծուած պատրուակով մը:

Բայց այս «պիտի ընես» ըմբոստութիւն մըն էր իր տիրոջ հոգիին ու պատիւին, ինչպէս նաեւ արարք մըն էր Աստուծոյ դէմ: Քանի մը վայրկեանէն իր հոգիին մէջ պատերազմ կը մղուէր բարիին ու չարին միջեւ, որուն արդիւնքը չարին յանձնափոխ էր: Այս որոշումը ցոյց տուաւ իր անհաստատութիւնը: Արծաթափրութիւնը բոլոր չարիքներու արմատն է:

#### 3. Խաբող գործ –

Երբ մտքին մէջ կը հաստատէ այս արարքը, կը վազէ Նէեմանի ետեւէն, ու իր սուտ պատմութիւնը կ'ընկալի, «իմ տէրս զիս դրկեց...»:

Երբ թոյնը իր սիրտը մտաւ, առաջին խօսքը սուտ մըն էր իր սիրտը դէմ: Ոչ մէկ հաստատեցեալ կրնայ սխալ գործել ու վիշտ չպատճառել Աստուծոյ թէեւ նոյն այդ խօսքը կամ գործը մարդու աչքին անպատուութիւն կրնայ չթուիլ:

#### 4. Յաջողութեան երեւոյթը —

Իր ծրագիրը, արծաթ եւ հագուստ ունենալու յաջողած էր. իր ակնկալածէն անելի՛ մէկ տաղանդ արծաթ առնելու առած էր երկու: Նաեւ Նէեմանի ծառաները պիտի փոխադրեն այս ասպանքը ու հասցնեն իր տունը: Ի՞նչ բախտաւորութիւն...:

Ի՞նչ էին իր խորհուրդները, մինչ կը քալէր Նէեմանի ծառաներուն ետեւէն: Կ'արժէ կեղծատր ըլլալ:

Օտոտ ասրեակներայի շիտակ հատուցում է արծաթն ու հանդերձը...:

Ասաի 73րդ Սաղմոսին մէջ կ'ըսէ, Նախանձեցայ հպարտներուն, երբ ամբարիշտներուն յաջողութիւնը տեսայ... մինչէս որ սրբարանը մտայ ու անոնց վերջը իմացայ:

#### 5. Չակնկալուած յայտնաբերում —

Ներս մտնելով Գէեզի տիրոջը՝ Եղիսէի առջեւ կայնեցաւ:

Այդպէս ըրած էր անցեալին, հիմա ալ նոյնը կ'ընէ որպէս թէ բան պատահած չէ:

Արդեօ՞ք մենք ալ նոյն ձեռով յանձնատր չենք, երբ ուզած ենք մեր Տիրոջը հետ հաղորդակցիլ մինչ մեր սրտերուն մէջ չխոստովանուած մեղքեր կան: Չխաբուինք, Աստուած ծաղր չ'ըլլար:

Վատահ եղիր որ մեղքը քեզ կը գտնէ ու ծառայութեան անյարմար կ'ըլլաս:

Եղիսէ հարցուց, «ուրկէ կու գաս», պատասխանը, «ծառադ տեղ մը չզնաց»:

Ահա ինքնարդարացումի օրինակ մը, այս ապթաբողիկ ասպատանարանն էր:

«Միթէ իմ հոգիս քեզի հետ չզնաց», «հիմա արծաթ... առնելու ատե՞նն է»:

Օր մը հաշիւ տալ կայ:

#### 6. Սարսափելի պատիժ —

Մեղքը ծածկելը առաջնորդեց սարսափելի վիճակներու: Ծառ վիշտերով բռնուեցաւ.

- Խաչատաակութեան եւ ամօթի վիշտ. բորբոս եղաւ:

- Իր սիրտը մէն հեռանալու, օտարանալու վիշտ. անոր առջեւէն եղաւ:

- Իր սերունդները նոյն դատապարտութեան տակ - Նէեմանի բորբոսութիւնը քեզի ու քու սերունդիդ:

Գէեզի այս աշխարհը սիրելով եւ ուրանալով Աստուծոյն, Անոր ծառայութենէն հեռացաւ:

Դուն ամէն բանի մէջ հաստարիմ եղիր:

## ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒՆԻ ՀԵՏԵԻՒՆԱԿ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԸ

**Կիրակի** - Առաւօտեան 11-ին Պաշտամունք

Մանուկներու Կիրակնօրեայ

**Երեքշաբթի** - Երեկոյեան 7-ին Սերտողութիւն

**Հինգշաբթի** - 7-ին Երիտասարդաց Սերտողութիւն

8:30-ին Երգչախումբի Փորձ

**Ուրբաթ** - Առաւօտեան 10:30-ին Քոյրերու Ժողով

7:30-ին Պատանեաց

**Շաբաթ** - Ամէն Ամսուայ Վերջին Շաբաթը Երեկոյեան

7-ին Երիտասարդ Ձոյգերու Ժողով

# ԳՈՐԾՈՒՆ ԷՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՏԵՐՈՋ ՓԱՌՔԻՆ ՀԱՄԱՐ

■ Սեպտեմբեր 25-ին Գեորգ եղբայր Պարոնեան, Եուֆայի Արարատ Աւետարանական եկեղեցիին առաջնորդը իր առաքելութենէն տուն եկաւ: Անկա տարբեր տեղական եկեղեցիներ այցելած է՝ Բերժէ, Նար Դոս, Մասիս, Արարատ, Արեւշատ, Նշավան եւ Սրգաստան: Իր տեսակցութիւնները հաստատեցան եւ եկեղեցական առաջնորդներու հետ մղած է զինք նուիրումի ու քաջակերպութան: Աստուծոյ փառք կու տանք ապահով եւ պտղաբեր այցելութեան համար:

Իր բացակայութեան երկու Կիրակիներ Լոս Անճելըսէն եղբայրներ բեմական ծառայութիւն կատարեցին Եուֆայի եկեղեցիին: Սեպտեմբեր 15-ի շաբաթավերջը Ճորճիկ եղբայր Սեփանեան, այցելութիւններ տալով ու Կիրակնօրեայ պաշտամունքին պատգամելով օգտակար եղաւ. իսկ 22-ի շաբաթավերջը հովիւր Վիքթորիա քրոջ եւ Մարկանեաններու հետ Եուֆա գտնուելով՝ պատգամով, այցելութիւնով ու սերտողութեամբ ծառայեց:

■ Նոյեմբեր 2-ին մեր փառաբանութեան ճաշկերոյթն է: Պատգամաբերը պիտի ըլլայ Վահիկ եղբայր Հատաստեան, ու փոքր գեղարուեստական յայտագիր մը պիտի ունենանք: Աղօթող ըլլանք եւ մասնակցինք: Եթէ տակաւին տուն չես առած, խնդրեմ, անապարէ:

■ Տէրը կամի այս տարի համագումարը կ'ունենանք Բայն Քրէտոի մէջ, պատգամաբեր ունենալով Վեր. Հասիպ Այաճաճին, որ Կլէնտէլի Հայ Նագովրեցիի Եկեղեցիին նուիրեալ ու հաստատրիմ հովիւն է: Նիփըր պիտի ըլլայ, տեղական եկեղեցիին մէջ ծառայողներու պէտքը, վեր պիտի առնէ Աստուծաշունչէն տարբեր անհատներ: Վստահ ըլլալով թէ պիտի օրհնուինք. եթէ տակաւին տեղը չես ապահոված դիմէ յանձնախումբին:

■ Դեկտեմբեր 22-ի իրիկունը կը ծրագրուի ունենալ Ծնունդի անգուգական, երաժշտական յայտագիր մը Կլէնտէլի մէջ: Պատասխանատուն Միհրան եղբայր Գնաճեանն է. մեր երգչախումբի անդամներու կողքին կը մասնակցին Կլէնտէլի Աւետարանական Մկրտական եկեղեցիի երգչախումբը, ինչպէս նաեւ տեղական կարգ մը եկեղեցիներէ անդամներ: Աստուած օրհնէ ջանքերը ու զօրացնէ, մղելով ծառայելու միայն Իր փառքին համար: Ուրեմն այս թուականը վերապահենք:

■ Քաւէթի եւ սիտիի (ձայներիզ եւ սկաստակ) ծառայութիւնը օրէ-օր ստելի կազմակերպութեամբ բնոյթ կ'ունենայ Երուանդը, Վահանը, Անահիտն ու Յասմիկը, Սեակի օգնութեամբ իրենց լաւագոյնը կ'ընեն: Տէրունական օրուայ պատգամները ունինք, ինչպէս նաեւ Մաղաքեայ Մարգարէութիւնը ամբողջութեամբ Եփեսացիներու նամակն ու Յայտնութեան առաջին բաժինը (առաջին երեք գլուխները): Սքանչելի, օրհնաբեր ու լայնատարած առաքելութիւն է: Քաւէթի եւ սիտիի կողքին կրնայ ամէն Հայ համացանցի (ինթըրնէթ) վրայ լսել պատգամները եւ հետեւիլ Աստուծաշունչի սերտողութիւններու:

## ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

- ◆ Աշխարհը Աստուծոյ աշխատանոցն է ուր մարդեր կը շինէ:
- ◆ Ոչ մէկ մարդ զատուած է ու սրբուած Աստուծոյ համար, մինչեւ իր դրամը չէ նուիրած:
- ◆ Դրամը կրնայ զնել ամէն բան, ի բացառեալ սէր, ազատութիւն եւ անմահութիւն:
- ◆ Երբ իմաստուն կ'ըլլաս ու ազնիւ, հասած կ'ըլլաս իրական յաջողութեան:
- ◆ Անոնք չեն ձայնողի, երբ կը մեռնին վեճ նպատակներու համար:

# ԵՍ ՇՈՒՏՈՎ ԳԱԼԻՍ ԵՄ

Երկնքից քեզ տեսնում եմ  
Ամեն օր ահա քեզ հետ եմ  
Օրդ, հալդ լավ գիտեմ  
Ահա սպասիր գալիս եմ:

Հավատքդ զորացնում եմ  
Փորձությունով անցկացնում եմ  
Միշտ քա՛ջ եղիր. քեզ հետ եմ  
Վստահիր ինձ՝ փրկիչդ եմ:

Հուսա ինձի քեզ կկրեմ  
Մի՛ վհատիր՝ կարդարացնեմ  
Աղօթք արա: Քեզ լսում եմ  
Քեզ լավ բարին կամենում եմ:

Սերդ ես միշտ նորոգում եմ  
Երկնքից քեզ միշտ ժպտում  
Քեզ հավիտյան սիրում եմ  
Ահա շուտով գալիս եմ:

Նարինե Սարգիսյան  
Երեսան

---

## Armenian Evangelical Brethren Church

3200 London St., Los Angeles, CA 90026

(213) 483-7265 / Fax (213) 483-7002

Internet: [www.aebcm.org](http://www.aebcm.org) – E-mail: [aebcministries@aol.com](mailto:aebcministries@aol.com)